ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՖԵՐԻԿ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
ФЕРИК

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, COMMUNITY OF FERIK

10.02.2022թ

N010

ՀՀ Արմավիրի մարզպետ
Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն՝ Հովհաննիսյան

Ձեզ ենք ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 1հերթական նիստում ընդունված որոշումները:
Առդիր՝ 15 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Հասանյան

Կատարող՝ Ա. Գրիգորյան՝ Հեռ 077-79-06-95

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-0288-2022
02 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք

Նիստ N1 **27.01.2022թ.**

ՈՐՈՇՈՒՄ N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրադյան Տիտալ Շամոյի

Համայնքի ղեկավար՝ _____ ***Ռ. Հասանյան***

(ստորագրություն)

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ
համայնքի ավագանու
27.01.2022 թվի 1 նիստի որոշման N1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1.Օրակարգը հաստատելու մասի
Զեկ. Ռ. Հասանյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
Զեկ. Ռ. Հասանյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
Զեկ. Ռ. Հասանյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին
Զեկ. Ռ. Հասանյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման չորրորդ եռամսյակի մասին հաղորդում

Զեկ. Ռ. Հասանյան

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Զեկ. Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք

Նիստ N1 27.01.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 2

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին որոշում է

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ֆերիկ համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրադյան Տիտալ Շամոյի

Համայնքի ղեկավար՝ _____ *Ռ.Հասանյան*

(ստորագրություն)

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի

համայնքի ավագանու

27.01.2022 թվի 1 նիստի N 2 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՖԵՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. N 1 նիստ -2022թ. հունվարի 27-ին
2. N 2 նիստ -2022թ.մարտի 25-ին
3. N 3 նիստ -2022թ.մայիսի 25-ին
4. N 4 նիստ -2022թ.հուլիսի 22-ին
5. N 5 նիստ -2022թ.սեպտեմբերի 26-ին
6. N 6 նիստ -2022թ.նոյեմբերի 25-ին

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, 093-147-222

Նիստ N1 **27.01.2022թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3

ՖԵՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել գույքագրման փաստաթղթերը:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրադյան Տիտալ Շամոյի

Համայնքի ղեկավար՝ _____ *Ռ. Հասանյան*

(ստորագրություն)

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի
գյուղական համայնքի ավագանու
27.01.2022թվի 1 նիստի N3 որոշման

ՖԵՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

27.01.2022թ.-ի դրությամբ

Հ/հ	Գույքի անվանում	Չափման միավորը	Քանակ	Նշումներ
1	Ակումբ	հատ	1	վթարային
2	Նավես	հատ	1	
3	Պահեստ	հատ	1	
4	Գրասեղան	հատ	4	
5	Չիրկիզվող պահարան	հատ	4	
6	Աթոռ փափուկ նստատեղով	հատ	20	
7	Նստարան երեք տեղանի	հատ	3	
8	Ցուցանակ	հատ	1	
9	Զինանշան	հատ	1	
10	ՀՀ դրոշը տակդիրով	հատ	1	
11	Սեղան խորհրդակցական	հատ	1	
12	Համակարգիչ	կոմպլ.	3	
13	Ցերեկային լույսերի սյուներ	հատ	28	
14	պատճենահանող սարք Canon MF 4010	հատ	2	
15	կրակմարիչ	հատ	2	

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆԻՍ *N1* *27.01.2022թ.*

ՈՐՈՇՈՒՄ *N 4 -Ն*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով.

Ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատվածը 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատվածը 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատվածը 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները ՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30,տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարական օրվան հաջորդող օրվանից և տարածվում է2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերության վրա:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրադյան Տիտալ Շամոյի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. Հասանյան

Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումից անհրաժեշտ է հանել «27.12.2021» թվերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

2. Նախագծի 1-ին կետով հաստատվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Ֆերիկ համայնքի 2022 թվականի** բյուջեն համաձայն Հավելվածի, մինչդեռ Նախագծին կցված է Հավելված թիվ 1-ը, որով հաստատվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Հովտամեջ համայնքի 2021 թվականի** բյուջեն: Այդ առումով Նախագծի Հավելված 1-ն անհրաժեշտ է խմբագրել:

3. Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով հաստատվում են բյուջեի հատված 1-ը, 2-ը, 3-ը, 4-ը, 5-ը և 6-ը: Այդ առումով հայտնում ենք, որ բյուջեի վերոհիշյալ հատվածներն անհրաժեշտ է ձևակերպել հավելվածների տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները:

4. Նախագծի 10-րդ կետով նախատեսվող որոշման ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է վերանայել: Առաջարկում ենք այն շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա»:

5. Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի ընդունման հիմնավորումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն՝ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

1/19/2022

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, 093-147-222

Նիստ N1 **27.01.2021թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ***ՄԱՍԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ***

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի35-րդ հոդվածի 1-ին կետով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով և հիք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման չորրորդ եռամսյակի և երկրորդ կիսամյակի ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնումը դրման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրաղյան Տիտալ Շամոյի

Համայնքի ղեկավար _____ ***Ռ. Հասանյան***

(ստորագրություն)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Ֆերիկ համայնքի 2021թ. չորրորդ եռամսյակի և երկրորդ կիսամյակի վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 2880.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2104,7 հազար դրամ կամ կատարվել է 73 %-ով, այդ թվում՝

1/ Հողի հարկի պլանով նախատեսված 2714.0 հազար դրամի դիմաց փաստացի

մուտքերը կազմել է 1879,3 հազար դրամ կամ կատարվել է 89 %-ով:

2/ Փոխադրամիջոցների գույքահարկի պլանով նախատեսված 166.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 225,4 հազար դրամ կամ կատարվել է 135,7 %-ով:

2. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաս-

տացի մուտքագրվել է 459.0 հազար դրամ կամ կատարվել է 76,5 %-ով, այդ

թվում՝

1/ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 459.0 հազար դրամ կամ կատարվել է 76,5 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող

դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 6957,3 հազար դրամի

դիմաց փաստացի ֆինանսավորվել է 6957,3 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով, այդ թվում՝
պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 6957,3 հազ. դրամի դիմաց փաստացի տրամադրվել 6957,3 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

Ֆերիկ համայնքի 2021թ. չորրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեով նախատեսված 13000,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 17321,9 հազար դրամ կամ կատարվել է 133,2 %-ով:

Ֆերիկ համայնքի 2021թ. չորրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսված 5443,5 հազար դրամի դիմաց կազմել է 2104,7 հազար դրամ կամ կատարվել է 38 %-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Ֆերիկ համայնքի 2021թ. չորրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեով նախատեսված 14438,1 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 10744,1 հազ. դրամ, կամ կատարվել է 74,4 %-ով:

Վարչական բյուջեով նախատեսված ծախսերը բաշխվում են՝

1. Ֆերիկ համայնքի 2021թ. երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 10438,1 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 8744,1 հազար դրամ կամ կատարվել է 83,7 %-ով, այդ թվում՝

ա) տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 8154,0

հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 7073,3 հազար դրամ կամ կատարվել է 86.7 %-ով:

7. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման

10 բաժին 7 խումբ 1 դասով նախատեսված 450.0 հազար դրամի դիմաց ծախսը

կազմել է 300.0 հազար դրամ կամ կատարվել է 66,6-%-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

1. Ֆերիկ համայնքի 2021թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Ֆոնդային բյուջեով պլան 2000,0 ծախս չի կատարվել:

Համայնքապետարանի ղեկավար՝ Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, 093-147-222

Նիստ N1 **27.01.2022թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Աբասյան Քյարամ Զորբայի
2. Քյալաշյան Թոռուն Ամարի
3. Շամոյան Մաջիթ Ագիթի
4. Շառոն Զոհրաբ Մամեի
5. Մրադյան Տիտալ Շամոյի

Համայնքի ղեկավար _____ *Ռ. Հասանյան*

(ստորագրություն)

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

առ 31.01.2022

h/h	Անվանումը	Պլան	Տոկոս %	Փաստացի
1	Հողի հարկ	2.714.800		
2	Գույքահարկ	166.00		
3	Վարձ. հողի վճար	600.000		
4	Դոտացիա	6957.3		
5	Այլ եկամուտ	11000,0		
	ԸՆԴՀԱՄԵՆԸ	21438.1		